

5.17. 2011 թվականի հունիս ամսվա հիդրոտեղեկությունների պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոտեղեկության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, հունիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 1 աստիճանով, ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում՝ 1.5-1.9 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 0.5-1.5 աստիճանով (Արարատյան դաշտավայրում՝ ցածր 0.1-0.4 աստիճանով), երկրորդ և երրորդ տասնօրյակներում հանրապետության տարածաշրջանների զգալի մասում՝ 1-1.5 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում կազմել է +27 +30°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +23 +27°C, Սյունիքի նախալեռներում՝ +21 +22°C, ՀՀ Լոռու մարզում՝ +20 +23°C, լեռնային շրջաններում՝ +20 +24°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունիսի 29-ին: Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում գրանցվել է +36 +39°C, Արագածոտնի նախալեռներում՝ +35 +36°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +28 +34°C, ՀՀ Լոռու մարզում՝ +24 +29°C, Սյունիքի նախալեռներում՝ +26 +29°C, լեռնային շրջաններում՝ +27 +32°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է +7 +10°C, ՀՀ Լոռու մարզում՝ +8 +11°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +11 +16°C, Սյունիքի նախալեռներում՝ +10 +12°C, Սյունիքի հովիտներում՝ +12 +16°C, Արարատյան դաշտավայրում՝ +14 +17°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունիսի 14-15-ին: Լեռնային շրջաններում, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է +4 +7°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +7 +12°C, Արարատյան դաշտավայրում՝ +11 +14°C, Սյունիքի հովիտներում՝ +12 +16°C:

Ամսական տեղումների քանակը բաշխվել է շատ անհամաչափ և տարածաշրջանների զգալի մասում եղել է նորմայից ցածր: Արարատյան դաշտավայրում այն տատանվել է 55-140% սահմաններում, ՀՀ Տավուշի մարզում՝ 80-125%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 60-190%, Արագածոտնի նախալեռներում՝ 70-80%, ՀՀ Լոռու մարզում՝ 60-80% (ք.Տաշիրում՝ 117%), ՀՀ Շիրակի մարզում՝ 20-50% (Աշոցք գյուղում՝ 100%), ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 65-85%:

Հունիսի 2-9-ին և 12-13-ին ամենուրեք, 10-ին, 14-20-ին, 23-24-ին և 26-ին առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ:

Հունիսի 1-ին Անանուն լեռնանցքում (ՀՀ Արարատի մարզ) դիտվել է մառախուղ 500 մ տեսանելիությամբ, 17-18-ին և 27-ին Պուշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ)՝ 50 մ տեսանելիությամբ:

Հունիսի 2-ին, 5-ին, 11-ին և 18-22-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 10-18 մ/վրկ, պոռթկումները՝ 16-25 մ/վրկ: Հունիսի 3-5-ին, 7-8-ին, 11-ին, 14-ին և 20-ին տեղ-տեղ դիտվել է կարկուտ 1-2.5 սմ տրամագծով: Հունիսի 2-ին ք.Տաշիրում տեղացել է անձրև 40 մմ/2 ժ:

Հունիսի 30-ի դրությամբ ձյան ծածկույթը բացակայել է, 3000 մ բարձրություններից վեր պահպանվել են ձնալեզվակներ:

ՀՀ գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 100-140%-ը, առանձին գետերում՝ 170-190%:

Սևանա լճի մակարդակը հունիսին բարձրացել է 14 սմ-ով և հունիսի 22-23-ին կազմել 1900.50 մ, այնուհետև իջել 3 սմ-ով և հունիսի 30-ի դրությամբ կազմել 1900.47 մ, որը 2010թ. նույն օրվա համեմատ բարձր է 23 սմ-ով: Լճից բաց թողնված ջրի քանակը կազմել է 11.785 մլն. խոր. մ: